ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՖՈՐՈՒՄԻ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Արման Խաչատրյան

Գրիգոր Խաչատրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի եվ տեղեկատվայնացման վարչության պետի տեղակալ, կապի բաժնի պետ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Եգիպտոսի Արաբական Հանրապետութուն՝ քաղաք Կահիրե

2017 թվականի մայիսի 8-ից 9-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Ուսումնասիրել հայ-եգիպտական գործարար համագործակցության ուղղությունները և SS ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01, Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝ mintranscom@mtcit.am

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Միջոցառման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկա իրավիճակը, զարգացման միտումներն ու ուղղությունները, ոլորտում երկու երկրների կողմից ձեռք բերված հաջողություններն ու դիրքը միջազգային ՏՏ ասպարեզում:

Քննարկվել են նաև նորաստեղծ ընկերությունների գլոբալ էկոհամակարգի ստեղծումը և կապը համաշխարհային շուկայի հետ, ինչպես նաև Հայաստանում գոյություն ունեցող ՏՏ մարտահրավերներն ու ներդրումային հնարավորությունները:

Ֆորումի ընթացքում քննարկվել են ինչպես հայկական այնպես էլ եգիպտական start up-ների զարգացման նպատակով ներդրումների ներգրավմանը վերաբերող հարցերը:

Քննարկվել են հայ-եգիպտական գործարար համագործակցության ուղղությունները, ՏՏ ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները, ոլորտի մասնագետների միջև համագործակցության ընդլայնումը և նորաստեղծ ընկերությունների ներուժը բացահայտելու նպատակով համատեղ կրթական ծրագրերի մշակումը:

Միջոցառման շրջանակներում քննարկվել է Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև «Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագիծը:

Կայացած երկկողմ հանդիպումների ընթացքում Եգիպտական ՏՏ ոլորտի կազմակերպությունների ղեկավարների հետ քննարկվել է երկու երկրներում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործարար շրջանակների շփումների աշխուժացման և հայ-եգիպտական գործարար կապերի խորացմանն ուղղված անելիքները, ինչպես նաև ՏՏ ոլորտում համատեղ կրթական ծրագրերի իրականացման, գործող կազմակերպությունների միջև համագործակցության ձևավորման հարցերը, որը հնարավորություն կտա Եգիպտական կազմակերպություններին մուտք գործել ԵԱՏՄ շուկա,

իսկ հայկական կազմակերպություններին՝ Աֆրիկյան շուկա համատեղ ծրագրերի իրականացման համար:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Գործուղման ընթացքում հանդիպումներ են կայացել՝

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների միջազգային համագործակցության գծով նախարարի տեղակալ ՝ Ներմինե Էլ-Սաադանի հետ,

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի խորհրդական՝ Հոսսան Օսմանի հետ,

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության SS ենթակառուցվածքների բաժնի պետ՝ Խալեդ Էլ Աթթարի հետ,

Այցի ընթացքում հանդիպումներ են կայացել նաև «Մաադի» տեխնո պարկի, Միջազգային տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործակալության, Եգիպտոսի ազգային հեռահաղորդակցության ինստիտուտի, Ազգային տելեկոմ կարգավորող մարմնի, «SILICON WAHA» ընկերության, Մշակութային արժեքների փաստաթղթավորման կենտրոնի, «EgyptInnovate» տեխնոլոգիական նորարարությունների և ձեռնարկատիրության կենտրոնի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Նախտեսվում է իրականացնել համատեղ հետազոտական ծրագրեր, այդ թվում՝ 5G տեխնոլոգիաների ոլորոտում, ինչի նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել

մշակել դրամաշնորհային ծրագիր, որը հասանելի կլինի հայ-եգիպտական աշխատանքային խմբերին՝ համատեղ հետազոտական աշխատանքներ իրականացնելիս:

Եգիպտական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև տեխնոպարկերի, ինկուբատորների և տեխնոլոգիական կենտրոնների միջև համագործակցության վերաբերյալ, որը հնարավորություն կտա համապատասխան մասնագետների միջև իրականացնել փորձի փոխանակում և համատեղ ծրագրերի մշակում:

Ոլորտում երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով՝ Եգիպտական կազմակերպությունները հրավիրվել են մասնակցելու Հայաստանում կայանալիք Արմտեք և Դիջիտեք միջոցառումներին, իսկ հայկական կազմակերպությունները նմանատիպ առաջարկ են ստացել եգիպտական միջոցառումներին մասնակցելու համար:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի այցը Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում նախատեսվում է ստորագրել «Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Արման Խաչատրյան

Գրիգոր Խաչատրյան

18.05.2017թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01, Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝
mintranscom@mtcit.am